


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՍԱՏ

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր ՈՒՍՈՒՑՁԻՆ ՈՔՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խ Ս Հ Մ Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

ԽՈՍԿՎԱՑԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԽՍՀՄ-Ի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՓՈՐՁԻՑ



Լ Ո Ւ Ս Հ Ր Ա Տ

ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑՁԻՆ ՈԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՈՍԿՎԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԽՍՀՄ-Ի ՍԱՀՄԱՆԱ- ԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՓՈՐՁԻՑ *)

1. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ստալինյան Սահմանադրությունը հաղթանակած սոցիալիզմի պատմական մեծագույն փաստաթուղթ է. դա մարդկությունը դարավոր ճշնշումից և շահագործումից ազատագրելու ճակատում ՈՍՀՄ-ի ժողովուրդների պայքարի ու հաղթանակների հանրագումարն է: Սահմանադրության յուրաքանչյուր հոդվածը սոցիալիզմի համար աշխատավորության պայքարի փայլուն հանրագումարն է: Ամբողջ խորհրդային ժողովուրդը խորը գնահատում է և մեծ հեռաքրքրությամբ ուսումնասիրում էր և ուսումնասիրում է Ստալինյան Սահմանադրությունը:

Ստալինյան Սահմանադրության ուսումնասիրությունը հսկայական դաստիարակչական նշանակություն ունի յերիտասարդ սերնդի համար, վորը գեոևս մասնակցություն չի ունեցել սոցիալիզմի համար մղած պայքարում, վորը գեո միայն պատրաստվում է դիտակցական կյանքի մեջ մտնելու համար: Մեր դպրոցականները, ոգովելով սոցիալիստական հասարակության բոլոր բարիք-

ներից, քիչ գիտեն այն արյունահեղ և ծանր պայքարի մասին, վորը բանվոր դասակարգի մի քանի սերունդներին վիճակվեց տանել, նախքան մեր յերկիրը բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետություն դառնալը:

Սահմանադրության ուսումնասիրությունը յուրաքանչյուր դպրոցականի պետք է սովորեցնի կատարել խորհրդային պետության որենքները, պաշտպանել աշխատանքի կորդապահություն, ազնվորեն վերարերվել գեղի հասարակական պարտքը, հարգել և կատարել սոցիալիստական համակեցության կանոնները, խնամել և ամբացնել սոցիալիստական սեփականությունը, պաշտպանել իր հայրենիքը: Սահմանադրության ուսումնասիրությունը միջնակարգ դպրոցում հզոր զենք է աճող սերնդի կոմունիստական դաստիարակության համար:

Անցած ուսումնական տարին զուգադիպեց մեր յերկրի կյանքում հրկայական պատմական նշանակություն ունեցող գեպքերի: Ընտրություններին նախապատրաստվելը և ՈՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունները, ՌԽՖՍՀ Գերագույն

*) Կաղմեց Մոսկվայի քաղաքային մանկկարգնետի պատմության մեթոդիստ Լիովին Ս. Ա.

Պորճրդի ընտրությունները և միութենական հանրապետությունների Գերագույն Պորճրդների ընտրությունները ՍՍՀՄ-ի քաղաքացիների քաղաքական ակտիվությունը խոչըրարձրության վրա դրին: Ամբողջ յերկիրը ապրում էր ՍՍՀՄ-ի Գերագույն Պորճրդի, ՌԽՖՍՀ Գերագույն Պորճրդի և միութենական հանրապետությունների Գերագույն Պորճրդների ընտրությունները նախապատրաստելով:

Ընտրությունների նախապատրաստումը և Գերագույն Պորճրդի ընտրությունները աշխատավորության ամբողջ մասնաչի համար քաղաքական դաստիարակության մի հիմնալի դպրոց հանգիստացան, աճեց քաղաքական գիտակցությունը, բարձրացավ հեղափոխական զգոնությունը, աճեց խորհրդային հայրենասիրության զգացմունքը, հայրենիքին անսահման նվիրվածության զգացմունքը:

Ընտրությունների նախապատրաստումը և Գերագույն Պորճրդի ընտրությունները հեղափոխական քաղաքական դաստիարակության աղբյուրներն էին խոչըրարձրության վրա և նրանց մեջ մեծ հետաքրքրություն առաջացրին դեպի Սահմանադրության ուսումնասիրությունը:

1937 թ. դեկտեմբերի 12-ի Համադրվողական տոնը, վորը հանգիստացավ Պորճրդային ժողովրդի չտեսնված բարոյական-քաղաքական միասնության ցուցադրում, սովորների մեջ էլ իր հզոր սոցիալիստական հայրենիքի համար հպարտության արժանական զգացմունք առաջ բերեց: Աշակերտները մեծ ուրախությամբ մասնակցում էին սովորացրոն աշխատանքներին, մեծ հետաքրքրությամբ լրագրեր էյին կարդում, համեմատում էյին ընտրություններին ներկայացողների տեղումը ՍՍՀՄ-ում ընտրություններին ներկայացողների տեղումը հետ բուրժուական յերկրներում և նրանք հրապարակա-

պաքսությունը ասում էյին, վոր ՍՍՀՄ-ում իշխանության բարձրագույն մարմինը հենվում է Պորճրդային ժողովրդի կամքի ու վստահության վրա:

Միութենական Հանրապետությունների Գերագույն Պորճրդների ընտրությունների նախապատրաստությունը գալրոցականների մեջ մեծ հետաքրքրություն առաջ բերեց ապելի մանրամասն ուսումնասիրել Միութենական Հանրապետությունները, նրանց անցյալը, նրանց հաջողությունները սնտեսական և կուլտուրական չինարարության մեջ Պորճրդային իշխանության արդ:

Աշակերտները մեծ վաղելորություն էյին պատրաստում զեկույումները Միութենական Հանրապետությունների մասին: Մեծ հետաքրքրությամբ էյին յսում գալրոցականներն իրենց զեկույող ընկերներին (ԼԺԿԲ 17-րդ դպրոցը, Սրվերդլովի չրջանի 167-րդ դպրոցը):

Ուսումնասիրելով Սահմանադրությունը—«մի պատմական փաստաթուղթ, վորը պարզ ու սեղմ, համարյա արձանագրական վոճով, կիսոսի ՍՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթության փաստերի մասին, կապիտալիստական ստրկությունից ՍՍՀՄ-ի աշխատավորների աղատագրման փաստերի մասին, ՍՍՀՄ-ում ծաղալուն, մինչև վերջը հետևողական զեմոկրատիայի հաղթության փաստերի մասին» (Ստալին—Ձեկույում ՍՍՀՄ-ի Սահմանադրության նախագծի մասին),—մեր յերենասիրը սովորում են սիրել իրենց հայրենիքը, գնահատել Հեկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության համաշխարհային պատմական նվաճումները, դաստիարակվում են պրոլետարական ինտերնացիոնալիզմի և Լենինի Ստալինի գործին անսահման հավատարմության վորդով:

VII դասարանի ուսումնական պլանի մեջ Սահմանադրության ուսումնասիրությունը մտցնելը հակալական

քաղաքական նշանակություն ունեցող փաստ է հանդիսանում: Դեռ Պորճրդների V Համաուսաստանյան համագումարը, վորը 1918 թ. հուլիսի 10-ին հաստատեց ՌԽՖՍՀ առաջին Սահմանադրությունը, վորում ընդունեց բոլոր ուսումնական հաստատություններում մտցնել սահմանադրության ուսումնասիրությունը: «5-րդ համագումարը հանձնարարում է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին Ռուսաստանյան Հանրապետության բոլոր դպրոցներում և ուսումնական հաստատություններում, առանց բացառության, մտցնել ներկա Սահմանադրության հիմնական սկզբունքների ծանոթացումը նույնպես և նրանց պարզաբանումն ու մեկնաբանումը»:

ՍՍՀՄ-ի Պորճրդների Արտակարգ VIII համագումարի կողմից մեր ժամանակաշրջանի մեծագույն պատմական փաթեթաթուղթը—Ստալինյան Սահմանադրությունը—հաստատելուց հետո ՍՍՀՄ-ի ԺԿԽ նախագահ ընկ. վ. Մ. Մորոտովը Միութենական

Հանրապետությունների Ժողովմխորհների բոլոր նախագահներին հեռագրով առաջարկեց. «Սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողների չարքերը մտնելու համար պատրաստվող սովորող յերիտասարդության կողմից Պորճրդային հասարակարգի հիմքերն ուսումնասիրելու նպատակով, ՍՍՀ Միության Ժողովմխորհը առաջարկում է Միութենական Հանրապետությունների Ժողովմխորհներին»:

1. 1936-37 ուսումնական տարվա մնացած ժամանակաշրջանում կազմակերպել միջնակարգ դպրոցների 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ դասարանների աշակերտության մանրամասն ծանոթացումը ՍՍՀ Միության նոր Սահմանադրության հետ:

2. 1937-38 ուսումնական տարվանից միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում, վորպես յեքնուրյուն առարկա մտցնել ՍՍՀ Միության Սահմանադրության դասավանդումը» («Պրավդա», 1937 թ. փետրվարի 2, № 32 (6998)):

II. ՍՍՀՄ-Ի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՓՈՐՁԸ 1937-1938 ՌՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՍՍՀՄ-Ի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

Անցած ուսումնական տարվա փորձը համոզեցուցիկ կերպով ցույց տրվեց, վոր նախատեսարար չե ՌԽՖՍՀ Սահմանադրությունն ուսումնասիրել ՍՍՀՄ-ի Սահմանադրության II գլխի կապակցությամբ, յեչպես զա դրված էր ԼԺԿ-ի 1937-1938 ուսումնական տարվա թեմատիկայում: Ուսուցիչների միահամուռ կարծիքն այդ հարցի մասին հանդուս է նրան, վոր ՌԽՖՍՀ Սահմանադրության պարզաբանումը պետք է տանել ՍՍՀՄ-ի Սահմանադրության համապատասխան դլույններին գուդահեո (III, V և այլն), իսկ հետո ՍՍՀՄ-ի Սահմանադրության ուսումնասիրելուց հետո, առանձին դասեր

առանձնացնել ՌԽՖՍՀ Սահմանադրության համար: Դասընթացի այսպիսի կառուցվածքը ճիշտ է մեթոդորգեսպես և մեթոդապես: Նյութն ընտրելիս, որինպի ՍՍՀՄ-ի Սահմանադրության I, II, X, XI, XII գլույնների կրարակցությամբ, ուսուցիչը մչտապես պետք է նկատի ունենա Միութենական Հանրապետությունների Սահմանադրությունները: Այսպես, խոսելով ՍՍՀՄ-ի քաղաքական հիմքի մասին, ուսուցիչը պետք է պատմի սովորողներին, վոր Միութենական Հանրապետությունների քաղաքական հիմքի մասին յեղած հոգվածը հաչվի յի առնում պատմական անցյալի առանձնահատկու-

11-28474 30

Թյունները—աղագային ճնշումը, յերկրի տնտեսության հետամնացությանը ցարիզմի որոշ (Ուգրեկական, Տաջիկական, Ղազախական և ՍՍՀ Սահմանադրության 2, 4 հոդվածները)։ Սա կողմի սովորողներին—ՍՍՀՄ-ի Սահմանադրության II գլխի ուսումնասիրության կապակցությամբ—համալսարանի Միութենական Հանրապետությունների Սահմանադրությանը։

X գլուխը կնոջ իրավահավասարության մասին, ուսումնասիրելիս, հարկավոր է ցույց տալ, վոր մեր Միջին Ասիական Հանրապետություններին, ինչպես նաև Ալբանիական ՍՍՀ-ի Սահմանադրություններում նշված է, վոր հետապնդվում են այն անձինք, վորոնք խոչընդոտ են հանդիսանում կանանց իրավահավասարության իրականացմանը։

XI գլուխը (ՍՍՀՄ-ի բնորակապետության) ուսումնասիրելիս անհրաժեշտ է ցույց տալ, վոր յուրաքանչյուր Միութենական Հանրապետության Սահմանադրությունն Գերագույն Որոշողի բնորոշություններին իր նորման է սահմանում։

XII գլուխն ուսումնասիրելիս հարկավոր է ցույց տալ վոչ միայն ՍՍՀՄ-ի գերբը, այլ և բոլոր Միութենական Հանրապետությունների գերբերը։

Դատական զանգվածն ուսումնասիրությանը ուսումնական տարվա ընթացքում և ստուգումների ընթացքը ցույց տվին, վոր ուսուցիչների լավագույն մասը լավ արդյունքների չէ հասել սահմանադրությանն ուսումնասիրելիս։ Մի քանի դասերի որինակով քննության առնենք թե ինչպես է ուսուցիչը լավ արդյունքների հասնում։

Դասին նախապատրաստվելը վորոշում է դասի վորակը։ Ուսուցիչը նախապատրաստումը սկսում է Սահմանադրության համապատասխան հոդվածը և VIII համաժողովի Միութենական Արտակարգ Համագումարում ընկեր Ստալինի զեկուցումը կարգալով,

ապա կարդում է Մարքսի—Ենգելսի Լենինի—Ստալինի այն հոդվածները վորոնք անհրաժեշտ են տվյալ դասի համար։ Որինակ, նախապատրաստվելով «ՍՍՀՄ-ի տնտեսության պլանային վարումը» (Սահմանադրության 11-րդ հոդված) թեմային, ուսուցիչը կարդում է Լենինի զեկուցումը՝ խորհրդների VIII Համառուսաստանյան համագումարում ելեկտրիֆիկացիայի մասին, ընկեր Ստալինի զեկուցումը՝ XV համագումարին, —այն մասը, վորտեղ ընկեր Ստալինը խոսում է պլանի ելույթյան մասին (պլան-դերեկտիվ)։ Կարդում է սոցիալիստական արդյունաբերության աշխատավորների Համաժողովի Միութենական I կոնֆերանսում—1931 թ. փետրվարի 2-ին արտասանած ճառի այն մասը, վորտեղ ընկեր Ստալինը խոսում է այն մասին, թե ինչու մեր արդյունաբերությունը մենք պետք է արագ թափելով դարգացնենք, մեր պարտավորությունների մասին համաշխարհային պրոլետարատի հանդեպ։ «Մենք պետք է այնպես առաջ շարժվենք, վոր համար աշխարհի բանվոր դատակարգը, նայելով մեզ՝ կարողանա ասել. ահա նա, իմ առաջավոր ջոկատը, ահա նա, իմ հարվածային բրիգադը, ահա նա, իմ բանվորական իշխանությունը, ահա նա, իմ հայրենիքը, — նրանք լավ են անում իրենց գործը, մեր շորձը, — նրանց աջակցենք կապիտալիստների դեմ և բոլորքենք համաշխարհային հեղափոխության գործը»։ Այս հատվածի ընթերցումն աշակերտների վրա հսկայական ազդեցություն է թողում, նրաք ընթերցումը լսում են փայլող աչքերով։

Բացի այդ հոդվածներից ուսուցիչը ոգտվում է ընկեր Ստալինի «Առաջին հնգամյակի հանրադրմանը» (Զեկուցում Համ.Կ(բ)ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլանում 1933 թ. հունվարի 7-ին) զեկուցումից. այնուհետև ուսուցիչը Ստալինյան յերկու հնգամյակների իրականացման հետևանքով մեր

տնտեսության զանազան մասին բնորոշում է դիագրամներ։ Այս բոլոր նյութը ընտրելուց հետո միայն, նույնպես և կապիտալիստական յերկրներում գոյություն ունեցող ձգնաժամերի ու գործադրության մասին նյութեր ընտրելուց հետո միայն, ուսուցիչը կազմում է դասի պլանը— կոնսպեկտ։ Այսպես են նախապատրաստվում դասերին ընկ. ընկ. Ռայսը (153 դպրոց), Պանկովը (60 դպրոց), Ֆուրմանովան (408 դպրոց), Դուբոսարսկայան (1346 17 դպրոց), Բարինովը (346 դպրոց) և ուրիշ շատ ուսուցիչներ։ Դասի մանրազնին, խնամքով նախապատրաստելը թույլ է տալիս դատարարական կերպով արժեք ունեցող մեծ նյութ հաղորդել աշակերտությանը։ Լավագույն ուսուցիչները դասի համար նույնպես իլյուստրատիվ գեղարվեստական նյութ են նախապատրաստում— վոտանավորներ, պատմվածքներ և հատվածներ և այլն։

«Վրացական ՍՍՀ» թեմայի որինակով քննարկենք, թե ինչպես 346, 318, 545 և ուրիշ դպրոցների դասատուները նախապատրաստվում էին ու անցկացնում այդ թեման։

«Վրացական ՍՍՀ» ուսումնասիրվում է ՍՍՀՄ-ի Սահմանադրության II գլխի— «Պետական կառուցվածքի» կապակցությամբ։ Յուրաքանչյուր Միութենական հանրապետության որինակով հարկավոր է ցույց տալ, վոր Միութենական հանրապետությունների տնտեսության, կուլտուրայի ծաղկումը հանդիսանում է լենինյան — ստալինյան աղագային քաղաքականության արդյունք, անխնա պայքարի հետեվանք ինչպես մեծաշեռական շովինիզմի դեմ, նույնպես ել տեղական նոցիոնալիզմի դեմ։ Անհրաժեշտ է պարզաբանել սովորողներին, վոր կոմունիզմի համար մեղավոր հաջող պայքարի համար, ճա-

ղոնա — դերժանական ֆալգի գործակալների — արոցկիստների — բուխարինականների դեմ պայքարելու հետ միասին անհաշտ պայքար է անհրաժեշտ մղել նույնպես և բուրժուական նացիոնալիստների դեմ, վորոնք դործում են արոցկիստների ու բուխարինականների հետ միատեղ, համախոհ և հանդիսանում են սոցիալիզմի ամենավտանգ թշնամիները։

Դասը նախապատրաստելու համար ոգտադրվել է հետևյալ գրականությունը։

1. ՍՍՀՄ-ի Սահմանադրության հոդված 25, Վրացական ՍՍՀ Սահմանադրության հոդված 13։

2. Ստալին — Կենտրոնական Կոմիտեյի քաղաքական հաշվետվությունը Համ.Կ(բ)Կ XVI համագումարին։ «Լենինիզմի հարցեր», 10-րդ հրատարակության թարգմանություն, էջ 525—533։

3. Մոլոտով — «ճառ՝ արտասանած 1936 թ. մարտի 19-ին կառավարության և կուսակցության զեկավարների կողմից խորհրդային Վրաստանի պատգամավորության ընդունելության ժամանակ (տե՛ս В. М. Молотов — «Великая дружба народов», М., 1936 г.)».

4. Անդրեկովիչի հին բանվորների պատմվածքները Մեծ Ստալինի մասին։

5. Մեր հայրենիքը (Վրաստանի մասին)։

6. «Խորհրդային իշխանության 20 տարին», IX գլուխ (Վրաստանի տնտեսության և կուլտուրայի տե՛ս)։

7. Փաստաթղթեր ցարիզմի աղագային քաղաքականության մասին (ՍՍՀՄ-ի Ժողովրդական թանգարանի նյութերից)։

8. Ильин — «О пербах и народах» (մի գլուխ «Сегодня и вчера» դրքից)։

9. Լրագրային նյութեր Վրաստանի մասին։

1. ԽՍՀՄ-ի քարտեզ.
2. Ֆոտո — վրացական դեղար-
վեստը:

3. Գրատախտակի վրա գրած աղ-
յուսակ, — վրացական ԽՍՀ տնտե-
սության և կուլտուրայի աճման
թվեր:

Վորովհետև «Միութենական Հան-
րապետություններ» թեմաների վե-
րաբերյալ նյութերի ընտրությունն
ավելի դժվար է, — ապա քննու-
թյան առնենք, թե ինչպես եր կազմ
ված տվյալ դասի պատմվածքը:

346 դպրոցի ուսուցիչը նոր թեման
սկսեց դասի պլանը հաղորդելով:
Այնուհետև նա անցավ պատմելուն:
Յերեսաները պատմվածքից իմա-
ցան կովկասի հսկայական հարստու-
թյունների մասին, վրացական ժո-
ղովրդի անցյալի մասին, վրացա-
կան ժողովրդի պայքարի մասին ի-
րենց ստրկացնողների դեմ: Աշա-
կերտների վրա մեծ տպավորու-
թյուն թողեց իշխան Ֆիցիանովի
նամակից բերած քաղվածքը, վորը
այսպես եր սպառնում վրաստանի
գյուղացիներին. «Գուր կարժանա-
նաք իմ ալյուրությունը, և այն ժա-
մանակ յես կայրեմ ձեր բոլոր
տները, ձեզ կայրեմ, ձեր յերեսա-
ներից ու կանանցից կհանեմ փո-
րոտիքը»: Դասատուն շատ վառ
կերպով ցույց տվեց վրացի ժողո-
վրդի ճնշումը ցարիզմի կողմից,
պատմվածքներ բերեց վրացական
և կովկասյան ուրիշ ժողովուրդնե-
րի դժբախտ դրությունից:

Պատմվեց վրացական ժողովրդի
պայքարի մասին բուրժուական նա-
ցիոնալիստների և մենչևիկների
դեմ, խորհրդային իշխանության
համար մղած պայքարի մասին: Դա
աստուն է. Տիխոնովի յերկից մի
հատված բերեց, վորը նկարագրում
է մենչևիկների կողմից վրաստա-

նում կատարած դադանություններն
ու խայտառակությունները, վո-
րոնք զավթել էին իշխանությունը
Հոկտեմբերյան Սոցիալիստական
Մեծ հեղափոխությունից հետո:
Պատմվեց կուսակցության հավա-
տարիմ դավանների — Մ. Ուրջոնի-
կիձեյի և Ս. Մ. Կիրովի մասին,
վորոնք կաղմակերպեցին Անդրկով-
կասը մենչևիկներից — իմպերիա-
լիզմի աղենտներից — ազատագրելու
պայքարը, պատմվեց վրաստա-
նում խորհրդային իշխանություն
հաստատելու, խորհրդային ազգա-
յին քաղաքականություն իրակա-
նացնելու հետևանքով վրաստանի
տնտեսության և կուլտուրայի աճ-
ման մասին: Դասը յեղրափակվեց
ուսուցչի պատմածքով, վոր խոր-
հրդային ամբողջ ժողովուրդն ա-
ռանձնապես սիրում է վրաստանը
նրա համար, վոր այդ յերկիրն Ի.
Վ. Ստալինի հայրենիքն է և հա-
մառոտակի ծանոթացրեց յերեսան-
ներին Ստալինի կենսագրությանը:
Դասը վերջանում է վրացական ժո-
ղովրդական բանաստեղծի կողմից
ընկեր Ստալինին նվիրված «Յերկար
դու ապրիր և առողջ յեղիր» բա-
նաստեղծության ընթերցումով:

Պատմվածքը յերեսաներին պարզ
ցույց տվեց վրաստանի անցյալի ու
ներկան: Նա վերաբերվեց, վոր ու-
սուցիչը մեծ աշխատանք է տարել
դասի բովանդակության վրա: Աշա-
կերտները մեծ ուշադրությամբ և-
յին լսում պատմվածքը:

Դասն ավելի ևս մեծ արժեք կու-
նենար, յեթե կովկասի հեռավար
անցյալի մասին արած պատմու-
թյան կրճատման հաշվին ժամանակ
հատկացվեր նոր պատմած թեմայի
յուրացման ստուգմանը:

Դասը արժեքավոր է իր կոնկրե-
տությամբ, պատմականությամբ և

հուղականությամբ:

Դաստիարակչական և կրթական
մեծ արժեք ունեն ընկ. Ֆուրմանո-
վայի դասերը (408 դպրոց): Ահա
որինակ, նրա «Հայրենիքի պաշտ-
պանությունը յուրաքանչյուր քա-
ղաքացու սրբազան պարտքն է» թե-
մայով դասը:

Դասի սկզբում ուսուցչուհին ա-
ռեց «Նախքան Սահմանադրության
132 և 133 հոդվածներում գրված
մեր հայրենիքի յուրաքանչյուր
քաղաքացու հիմնական պարտակա-
նություններից մեկի ուսումնասի-
րությանն անցնելը, մենք վերհի-
շենք մեր յերկրում քաղաքացինե-
րին տրված բոլոր իրավունքները և
այն պարտավորությունները, վո-
րոնք մենք ուսումնասիրել ենք:
Մեզ մոտ իրավունքները միշտ
միացած են պարտականությունե-
րի հետ:

Կապիտալիստական յերկրներում
բոլորովին այլ բան է. իրավունք-
ները պատկանում են բուրժուա-
զիային, իսկ պարտականություն-
ները կրում են ճնշված դասակար-
գերը: Մեր հզոր գեղեցիկ հայրենի
քում, խորհրդային յերկրում, պար-
տականությունները սերտորեն
հյուսված են բոլոր իրավունքների
հետ: Հիմնական պարտականու-
թյուններից մեկի մասին ել այսօր
յես պատմելու յեմ ձեզ, իսկ այժմ
համառոտ տեսության ձևով կըր-
կրենք, թե Ստալինյան որենքով
ինչ իրավունքներ են տրված ԽՍՀՄ
-ի քաղաքացիներին և ինչպիսի
պարտականություններ են դրվում
նրանց վրա: Մտածեցեք, յերեսա-
ներ»: Աշակերտներից 10 հոգի մաս
նակցեցին գրույցին, վորը նվիր-
ված եր ԽՍՀՄ-ի քաղաքացիների
իրավունքները և պարտականու-
թյունները թեմայի կրկնությանը:
Սրանից հետո թեմայովեց և դրա-
տախտակի վրա գրվեց դասի հեր-

թական թեման:

Ընկ. Ֆուրմանովան իր պատմ-
վածքը սկսեց Սահմանադրության
132 հոդվածը — «ընդհանուր զինվա-
րական պարտականությունն որենք
և հանդիսանում է Զինվորական ծա-
ռայությանը Բանվորա-Գյուղա-
ցիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ
ի քաղաքացիների պատվավոր պար-
տականությունն է» — կարդալով:

Այնուհետև նա բովանդակալից և
պարզ կերպով պատմեց յերեսանե-
րին, թե ինչու զինվորական պար-
տականությունը և հայրենիքի
պաշտպանությունը հանդիսանում է
քաղաքացիների կարևորագույն
պարտականություններից մեկը, ին-
չու խորհրդային ժողովուրդը սի-
րում է իր սոցիալիստական հայրե-
նիքը: Կոնկրետ որինակներով պատ-
մելից, թե ինչ եր բանակը ցարա-
կան Ռուսաստանում: «Սուղատ»
(զինվոր) բառը ճնշման և իրավա-
զրկության խորհրդանիշն եր:
Դուք, հավանորեն, կարդացել եք
Նեկրասովի բանաստեղծությունը —
«Որինան — զինվորի մայր»:

Նեկրասովը ցարական բանակում
մարդկային անձնավորության սար-
սավելի ծաղրանքի մի վառ նկար
և տվել: Զինվորը, — ասում էյին
սֆիցերները (հրամանատարները),
— դա մի դորշ անասուն է,
զինվորը վոչինչ չի հասկանում:
Յեվ զինվորին սովորեցնում էյին
«բուռնցքով»: Յերբ զինակոչիկը ցա-
րական բանակ ծառայության եր
զնում, նրան սովորաբար ամբողջ
դյուրով էյին ճանապարհ դնում,
դառը լալիս էյին, կարծեք թե նը-
րան տանում էյին մեռնելու:

Խորհրդային յերկրասարդը սի-
րում է Կարմիր բանակը: Դասա-
տուն ոգտադործում է լրագրային
նյութեր, վարդեղ խոսվում է յերի-
տասարդության հրետանային ուղ-
մական դպրոցները մտնելու մասին,

հատուկ դպրոցները մտնելու յերևա-
տաստըները ձգտումները մասին,
փորձագիտի տիրապետել գինվորա-
կան դստերին, մարտիկ դառնալ, իսկ
հետո նաև ԲԳԿԻ հրամանատար լի-
նել: Մայրերն ու բախուկ ծամբ և
հպարտությամբ են իրենց փորձի-
ներին ԲԳԿԻ ուղարկում մեր հայ-
րենիքի սահմանները պաշտպանելու
համար:

Լավ պատմեց նաև դասակարգա-
յին թշնամության մասին ցարական
օրհրդերով և գինվորների միջև,
հեղափոխական շարժման սկսվելու
մասին գինվորների ու նավաստիների
միջև «Պատյոմկին» գրահանա-
վի վրա բարձրացած ապստամբու-
թյան մասին — նավատորմում տե-
ղի ունեցած հեղափոխական շարժ-
ման այդ ամենափայլուն եջի մա-
սին, — նույնպես և առանձին գինվո-
րական մասերի՝ ապստամբների
կողմն անցնելու ուրիշ փաստերի
մասին, 1905 թ. ապստամբած բան-
վորներին զնդակահարելուց գինվոր
ներին հրաժարվելու մասին, ամբողջ
գինվորական մասսայի բանվորների
կողմը, բոլշևիկների կողմն անցնե-
լու մասին 1917 թ.

Այնուհետև պատմվեց պաշտպա-
նության ժողովում Կ. Յե. Վորոչիլ-
ովի մասին, մեր Կարմիր Բանակի մա-
սին, վորը միշտ պահպանեց և կանգ-
նած սոցիալիզմի յերկրին գինված
տեխնիկայի վերջին խոսքով, այն
բանակի մասին, վորը զիտի, թե
ինչ պետք է պաշտպանի, զիտե, թե
ինչով պետք է պաշտպանվի, զիտե
թե ում պետք է պաշտպանվի, այն
բանակի մասին, վորին սիրում է
ժողովուրդը: Պատմվեց խորհրդա-
յին հայրենասիրության մասին, Լա-
դոգայի մասին, Կոտեյնիկովի մա-
սին, խորհրդային ուրիշ սահմանա-
պահների մասին, յերեսանների, պա-
տանիների, բանվորների, կոլտնտե-
սականների կողմից մեր սահմանա-
պահներին ցույց տրվող ուղեւթյան

մասին: «Մեր յերկրի սահմանները
պաշտպանելը — պատվավոր պարտա-
կանություն է»:

Վառ կերպով պատմվեց մեր խոր
հրդային ժողովրդի առեւտրության
մասին գեպի նրանց, ովքեր փոր-
ձում էին վերադարձնել կապիտա-
լիստական իրավակարգը, խորհրդա-
յին մարդկանց սիրտ մասին գեպի
ներքոգործող կոմսականները, վո-
րոնք արմատախիլ են անում դավա-
ճաններին և մատնելներին: 170 մի-
լիոնավոր ժողովուրդը սոցիալիզմի
յերկրի շահերի պաշտպանության
պահակ է կանգնած և վոչ վորքի չի
հանձնի հեղափոխության նվաճում-
ները:

Պատմվեց խորհրդային մարդ-
կանց հերոսության մասին, վորոնք
իրենց ուժերն ու տաղանդը տալիս
են հայրենիքին:

«Հանուն հայրենիքի հնչեց Ալեք-
սեյ Ստախանովի մուրճի հարվածը,
վորը շարժեց ամբողջ աշխարհը:
Հանուն հայրենիքի հիանալի դոր-
ժեր են անում Բուսիգինը, Դեմչեն-
կոն, Ոյստրախը և Վալյա Սետա-
յուրովան — մեր յերկրի յերիտա-
սարդ հայրենասերը, վորի կոչով
հաղարավոր յերիտասարդ հայրե-
նասեր աղջիկներ շարժվեցին գե-
պի մեր Հեռավոր Արեւելքը՝ բնա-
կություն հաստատելու համար:
Հանուն հայրենիքի Չիլիովը, Բայ-
դուկովը, Բելյակովը Ստալինյան
մարշրուտով Հյուսիսային բեմկո-
վրայով Մոսկվա — Ամերիկա դար-
մանալի թոխչե կատարեցին: Հա-
նուն հայրենիքի Պապանինը, Ֆեդո-
րովը, Կրենկելը և Շիրշովը դար-
մանալի սխրագործություն կատա-
րեցին:

Հանուն սոցիալիզմի հայրենիքի
րնկեր Ստալինը մեր խորհրդային
ժողովրդին հաղթանակից հաղթա-
նակ է տանում: Յեւ չհանուն հայ-
րենիքի, յերեսաներ, վորտեղ այն-
քան լավ է ապրելը, այնպես լավ

կարելի չէ սովորել, ձեր պարտա-
կանությունն է — հանուն հայրենի-
քի սովորել, շատ բան իմանալ,
գիտենալ այն բոլորը, ինչ վոր աը-
վել են մեզ մարդկային կուլտու-
րան և մարդկային խելքը, տիրա-
պետել ուղեւթյան գործին, վոր-
պետել պատրաստ լինել պաշտպա-
նելու խորհրդային սահմանները:
Դուք կլինեք այն մարդիկ, վորոնք
կ'ալելի կզարգացնեն կոմու-
նիզմի կառուցումը և պատվով
կկատարեն իրենց գինվորական պար-
տականությունը: Սորհրդային ժո-
ղովուրդը, իր հիացմունքը, ուրա-
խությունը, շնորհակալությունն ա-
ռաջնորդին, արտահայտում է իր
յերգերում — դուք այդ բոլորը գե-
տեք»:

(մեջբերումներ անել ընկ. Ստալինին
նվիրված յերգերից):

Այսպես վերջացով պատմվածքը:
Այնուհետև աշակերտները լուռ կար
դում են 133 հոգիվածը: Ուսուցչու-
հին ասում է. «133 հոգիվածը — դա
յերգում է, յուրաքանչյուր յերգում,
վորը տալիս է յուրաքանչյուր քա-
ղաքացի»: Այնուհետև բարձրաձայն
ընթերցվում է 133 հոգիվածը: Իբրե-
ռային աշխատանք տրվեց Սահմա-
նադրության 132 — 133 հոգիված-
ները:

«Իսկ այժմ թող յուրաքանչյուրը
ձեզանից մտածի այս հարցի մա-
սին «Ինչպես յես կպաշտպանեմ իմ
սիրելի հայրենիքը» և պատասխանը
գրեցեք ձեր տետրներում: Այդ հար-
ցի պատասխանը գրեցեք ինքնու-
րույն, վոչ վորքի մի հարցրեք, —
թող պատասխանը թելադրեն ձեզ
ձեր պաշտպանները: Իսկ հաջորդ
անգամ յես ձեզ համար կկարդամ
ԲԳԿԻ կանոնադրությունից գինվո-
րական ծառայողների պարտակա-
կանությունների մասին»:

Այս դասն, անկասկած, համա-
պատասխանում է այն պահանջնե-
րին, վորոնք առաջադրվում են Սահ-
մանադրության դասավանդմանը,

և հանգիստանում է արժեքավոր դաս
պատիւարակազան և կրթական տե-
սակետից: Ընկ ծուրմանով են կա-
տարում է այն պահանջները, վո-
րոնք առաջադրվում են դասին
ՀամԿ(Բ)Կ ԿԿ 1932 թ. ոգոտոտի
25-ի՝ տարրական և միջնակարգ
դպրոցի ուսումնական ծրագրերի և
ոեժիմի մասին վորոշմամբ: «Դա-
ստուն պարտավոր է սխտեմատիկ,
հետեղական կերպով շարադրել այն
գիտելիքներ, վոր ալանդում է ին-
քը, յերեսաններին ամեն կերպ վար-
ժեցնելով դասագրքով և գրքով աշ-
խատելուն»:

Անցած քննությունները Մոսկվա
քաղաքի մի շարք դպրոցներում
ցույց տվին, վոր աշակերտների
գիտելիքները լավ են:

Դասատու ընկ. Շաֆիրի (Լենին-
յան շրջան) աշխատանքները ցույց
են տալիս, վոր ուսուցչի կողմից
դասին լուրջ, մտածված նախա-
պատրաստվելու շնորհիվ, աշակերտ-
ները լավ են յուրացնում և սիրով
են ուսումնասիրում Սահմանադրու-
թյունը:

Սահմանադրության յեզրափակիչ
թեմաներից մեկը — «Ստալինյան
Սահմանադրության հիմնական ա-
ռանձնահատկությունները» թեման
է: Դասի առաջին մասն ընկ. Շաֆ-
իրը նվիրեց «ԽՍՀՄ-ի գերբը և
Սահմանադրությունը փոփոխելու
կարգը» թեմայի հարցմանը: Աշա-
կերտների պատասխանները ցույց
տվին, վոր յերեսաններն իրենց մըտ
քերը շարադրում են քաղաքականա-
պես ճիշտ և զրականորեն զրազեա
ձևով: Աշակերտ Ա. ճիշտ շարա-
դրեց Սահմանադրության 143 հոգ-
իվածը, նա ասաց. «Մեր գերբի
վրա հարգանքով և սիրով են նա-
յում բոլոր յերկրների աշխատա-
վորները: Դեռ 1918 թ. յերբ հա-
տատվում էր Ռուսաստանի Սորհր-
դային Ֆեդերատիվ Սոցիալիստական
Հանրապետության առաջին գերբը

Լեւոնի որսք, յերբ Սորհրդային Հանրապետութիւնը չընդգրկուած էր ինտերվենցիայի ողակով, Լեւոնիսը Կառլ Լիբլինիստին հուզիչ սողեր գրեց: Նա գրում էր, վոր հենց նոր բերեցին նրան պետական կնիքը, վորի վրա նկարված է զէրքը, և նա զմայլվում է զէրքով, վորը մարմնացնում է Հանրապետութեան հզօրութիւնը:

Գերբեր կան նաև արտասահմանում և բոլոր յերկրներում, — ուրիշակ, անդլիական գերբի վրա առյուծ է նկարված, վորը արտաքուրում է զիշատիչ քաղաքականութիւն, — պահանջում է գազութներ, գազութներ: Ֆաշիստներն ու նեն իրենց գերբը — սկստորկան: Նա նկարված է նրանց ինքնաթիւների վրա, վորոնք իսպանիայում և Զինատանում ոմրակոծում են անպաշտպան բնակիչներին — կանանց, յերեխաներին, ծերերին»: Մեթոդապես ճիշտ է վարվում ընկ. Շաֆիբը, յերբ, անցածը կրկնելիս, լրացնում ու հարստացնում է աշակերտների զիտելիքները: Նա հիշեցնում է աշակերտներին առաջներում կարդացած Իլլինի «Այսօր և վաղը» գրքում «Գերբերի և ժողովուրդների մասին» հոդվածը, վոր բուրժուական յերկրների գերբերը, դա — աշխատավորութեանը ճնշելու խորհրդանիշ է: Միայն մեր Սորհրդային գերբը, վորը Միութեան ժողովուրդների միավորման, բանվորների ու գյուղացիների դաշինքի խորհրդանիշն է, կոչ է անում բոլոր յերկրների աշխատավորներին պայքարել աշխատավորների իշխանութիւն հաստատելու համար»:

Մայակովսկին խորհրդային անձնագրի մասին, վորի վրա խորհրդային գերբ է նկարված, գրած իր բանաստեղծութեան մէջ հպարտութեամբ բացականչում է. «Կարդացեք, նախանձեցեք, յես Սորհրդային Միութեան քաղաքացի յեմ»: Դասատուն

մի անգամ ել ցույց է առել յԱրխաներին ՍՍՀՄ-ի ու ՌԽՖՍՀ գերբերի նկարները:

Պատասխանելով Սահմանադրութեան փոփոխութեան կարգի մասին, աշակերտ Ի. իր պատասխանով ցույց տվեց, վոր այդ գլխի ուսումնասիրութիւնը չի սահմանափակվում միայն Սահմանադրութեան տեկտիքներով, այլ ողտագործվում են նաև նյութեր ընթացիկ պետական չինարարութիւնից: Աշակերտը խելացիորեն պատմեց այն փոփոխութիւնների մասին, վորոնք մտցվեցին Սահմանադրութեան մէջ ՍՍՀՄ-ի Գերագույն Սորհրդի I սեսիայում, և ճիշտ բացատրութիւն տվեց փոփոխութիւններին նշանակութեան մասին, որինակ, «Ռազմա-ծովային նավատորմի կոմիսարիատ կազմելու կարեւորութիւնն ընդգծեց իր ճառում Սորհրդային Միութեան կառավարութեան նախագահ ընկ. Մոլոտովը: Նա ասաց, վոր մեզ անհրաժեշտ է մեծ ուժեղ նավատորմ ունենալ, վորպեսզի պաշտպանվել, աղրեն սորները»: Պատմվեց նաև Սահմանադրութեան 49 հոդվածի լրացման նշանակութեան մասին — նախագահութեան իրավունքի մասին — «Սահմանի վայրերում կամ ամբողջ ՍՍՀՄ-ում ՍՍՀՄ-ի պաշտպանութեան կամ հասարակական կարգը և պետական անվտանգութիւնն ապահովելու համար հայտարարել զինվորական դրութիւն» Ուսուցիչն աշակերտի պատասխանը լրացրեց, հաղորդելով, թե ինչպես բուրժուական յերկրներում դժվարացած է Սահմանադրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելը, և բացատրեց, թե ինչու յե այդ աղպես լինում: «Սահմանադրութեան ամեն տեսակի փոփոխութիւնը գրավում է աշխատավոր մասնակերի ու չարաւորութիւնը զեպի յերկրի հիմնական որներ: Իսկ դա ձեռնտու չէ կապիտալիստական յերկրների տիրող դասակարգերի համար, վորովհետեւ կապիտա-

լիստական յերկրների սահմանադրութիւններում ամբողջութեւն են այն կարգերը, վորոնք ձեռնտու և հարմար են բուրժուազիային, կալվածատերերին և բնավ վոչ այն կարգերը, վորոնք ձեռնտու և հարմար են աշխատավորութեանը, բանվորներին և գյուղացիներին. այդ պատճառով բուրժուական յերկրներում տիրող դասակարգերը վախենում են քննութեան առնել սահմանադրութիւնները: Միայն մեր յերկրում Սահմանադրութիւնը հաստատվեց համաժողովրդական քննարկումից հետո ժողովուրդը մտցնում էր իր լրացումները: Միայն Սորհրդային Սահմանադրութիւնն է արտահայտում ժողովրդի շահերը: Ուստի միայն մեր յերկրում կարող է Սահմանադրութեան փոփոխման աղպիսի հասարակ կարգ սահմանվել»:

Արժեքավորն ընկ. Շաֆիբի դասում հանդիսանում է այն, վոր շարադրելով նոր թեմա, ուսուցիչն ողտագործում է առաջներում կուտակված աշակերտների զիտելիքները նոր հարցերի պարզաբանման համար:

Նոր Սահմանադրութեան առանձնահատկութիւնների մասին արած շատ բովանդակալից պատմվածքը հերթափոխվում էր յերեխաների կողմից արած առաջներում սովորած Սահմանադրութեան մի շարք հոդվածների մասին պատմելով: Աշակերտ Պ. ճիշտ շարադրեց Սահմանադրութեան 4 հոդվածը՝ ՍՍՀՄ-ի տնտեսական հիմքի մասին: Աշակերտը պատմեց սահմանադրութեան 1 հոդվածի մասին, բացատրեց, թե ինչու այդ հոդվածում չի խոսվում ինտելիգենցիայի մասին: Պատմեցին 19 հոդվածի մասին՝ «Աշխատելու ՍՍՀՄ-ում»: Աշակերտուհի Մ. պատմեց յերկր դասակարգի զիտատուրայի յերեւո կողմնոր մասին և բացատրեց, թե ինչու զիտատուրան պատկանում է բանվոր դասակարգին. «Բանվոր դասակարգը հանդիսանում է առաջա-

վոր, ավելի համախմբված, ավելի կազմակերպված դասակարգ գյուղացիութեան համեմատութեամբ. բանվոր դասակարգն իր հետեից է տանում Սորհրդային Միութեան մնացած բոլոր աշխատավորներին»:

Ուսուցիչը քաղվածքներ բերեց ճապոնական սահմանադրութիւնից (բուրժուական յերկրների սահմանադրութիւնները, հատ. 1) և ատորինակով կոնկրետ ցույց տվեց, թե ում շահերն է պաշտպանում այդ սահմանադրութիւնը:

Սոսելով Սորհրդային Սահմանադրութեան խոր ինտերնացիոնալ բնույթի մասին, ուսուցիչը խնդրեց աշակերտուհի Մ-ին պատմել Սահմանադրութեան այն հոդվածի մասին, վորը խոսում է իրավահամասարութեան մասին ՍՍՀՄ-ում: Արժեքավոր էր այն, վոր ուսուցիչը, հաստատելով հոդվածի գործող լինելը, մի քաղվածք բերեց ՌԽՖՍՀ քրեական որենսդրից (հոդ. 597), վորտեղ խոսվում է այն մասին, վոր «այն պրոպագանդան կամ ագիտացիան, վորն ուղղված է գողութու աղգային կամ կրոնական թշնամութիւն կամ յերկառակութիւն...» պատժվում է ընդհուպ մինչև զնդականաբութիւն: Այսպիսով դասատուն ընդգծեց խորհրդային արդարադատութեան դերը, այն արդարադատութեան, վորը, վորպես պահակ, պաշտպանում է ՍՍՀՄ-ի հիմնական որենսդրը:

Դասատուն բերեց ընկեր Ստալինի խոսքերը. «Նոր Սահմանադրութիւնը մի մեղադրական ակտ կլինի Ֆաշիզմի դեմ» և պատմեց, վոր 193 հոդվածը, մասնավորապես, — մեղադրական ակտ է Ֆաշիզմի դեմ, նրա գաղաւաչին ռասային, թեոքրայի ուժ, մոռ մարդկանց բաժանում է արիացիների և ստորին ռասաների. այդ թեոքրան Ֆաշիստներն աւետք է նրա համար, վորպեսզի նրանք արդարացնեն իմպերիալիստական նոր

պատերազմը, տերիտորիալ նոր գալ-
թումները, հարձակումներն ուրիշ
յերկրների վրա և առաջին հերթին—
մեր խորհրդային Միության վրա:

Բուրժուական դեմոկրատիայի կեղ-
ծիքները մերկացնելու որինակներով
(կանանց զրկելն ընտրական իրա-
վունքներից, նստակեցության ցենզը
և այլ) ուսուցիչը ցույց տվեց
Խորհրդային Մասմանադրության
լիակատար, իսկական դեմոկրատիզ-
մը: Իր պատմվածքում ուսուցիչը
լրելի կերպով պարզաբանեց աշա-
կերտներին VIII Արտակարգ Համա-
գումարում տված ընկեր Ստալինի
գեկուցման III գլուխը:

Դասը վերջացավ տնային աշխա-
տանքի համար տված առաջադրու-
թյան գրանցումով և պարզաբանու-
թյամբ:

Ուսուցիչը ձիշտ լուծեց տվյալ դա-
սի խնդիրները: Դասի ընթացքը
ցույց տվեց, վոր ուսուցիչը սխտե-
մատիկորեն աշակերտների դիտելիք-
ների հաշվառում է կատարում, վոր-
քը աշխատանքի կարևոր տարրից
մեկն է:

Մասմանադրության ուսուցման աշ-
խատանքի լավ դրվածքի որինակ են
ծառայում Լենինգրադյա շրջանի №
153 դպրոցի դասատու Ռայսի դասե-
րը: Ստուգողական քննությունները
աշակերտների փայլուն դիտելիքներ
ցուցաբերեցին: Մա հանդիսանում և
յուրաքանչյուր դասին մանրադնին
նախապատրաստելու հետևանք, դը-
րական-իլյուստրատիվ պարզ նյու-
թերի ու դիտողական ձեռնարկների
ոգտադործման հետևանք, վորոնք
ընկ. Ռայսի դասին միշտ լինում են:

Լավ եր գնում 126 և 112 դպրոց-
ների յերիտասարգ ուսուցչուհի ընկ.
Յակովլեվայի (պարաչուտիստկա—
չքանչանակիր) աշխատանքը: Նա
խնայքով եր աշխատում դասավանդ-
ման մեթոդիկային տիրապետելու
համար, պարբերաբար մասնակցում
եր սեմինարներին: Նա նշանավոր
հետևանքների հասավ, հաջող բա-

ցատրելով յերեխաներին ամենից ա-
վելի զգվար թեմաները:

Մասմանադրության 14-րդ հոդ-
վածին նվիրված դասը բավականին
գեթվարություն է յուրացվում ա-
շակերտների կողմից: Ընկ. Յակով-
լեվան նկատի ունեցավ սեմինար
պարապմունքի ժամանակ նրան տըր-
ված խորհուրդը,— Մասմանադրու-
թյան հոդվածի կետերը խմբավորեց
հետեվյալ բաժինների. միջազգային,
տնտեսական և պլանային, ներքին,
քաղաքական և որենտրոսկան հար-
ցեր: Բացատրելուց հետո աշակերտ-
ներին ինքնուրույն աշխատանք առա-
ջադրվեց— խմբավորել Մամանադ-
րության 14 հոդվածի հարցերը: Ա-
շակերտների ինքնուրույն աշխատան-
քը ցույց տվեց, վոր նրանք հասկա-
ցել են ուսուցչուհու բացատրությու-
նը և կարողացել են ձիշտ խմբավո-
րել հարցերն ըստ վերելում ցույց
տված բաժինների:

Ծանոթություն.— Մասմանա-
դրության 14 հոդվածն ուսում-
նասիրելիս նույն մեթոդը կի-
րառող ուրիշ ուսուցիչների
ընկ. Դիոմիդովի (587 դպրոց),
ընկ. Մոսկալևայի (545 դպրոց)—
փորձը ցույց տվեց, վոր կարելի
յե նաև այլ կերպ խմբավորել
հարցերը, այնե՛ ի՞նչ ՄՍՀՄ-ի արտա-
քին հարաբերությունները կա-
պիտալիստական յերկրների հետ,
ԽՍՀՄ-ի փոխհարաբերություն-
ները Միութենական Հանրապե-
տությունների հետ, Ժողովրդ
դական տնտեսության սոցիալիս-
տական սխտեմը, ընդհանուր
միութենական որենտրոսկությունը:

Ընկ. Յակովլեվայի աշակերտները
լավ են յուրացրել Մասմանադրու-
թյան «Պետական իշխանության տե-
ղական մարմինները» գլուխը վորով-
հետև ընկ. Յակովլեվան չի սահմա-
նափակվել միայն դասարանում պատ-
մելով, այլ աշակերտներին առանձին
փոքրիկ խմբեր (4-5 հոգի) ուղարկել
ե Երջխորհրդի (իրենց Խորհրդային

չրջանի) դանադան բաժինները, տա-
լով նրանց առաջադրություն—դրու-
ցել բաժինները դեկավարների հետ և
հարց ու փորձ անել Երջանային խոր
հրդի դործունեյության մասին: Բա-
ցի դրանից, վերելում հիշված թեման
բացատրելիս, ընկ. Յակովլեվան,
ինչպես և Խորհրդային շրջանի ուրիշ
ուսուցիչներն, ոգտադործել և հաշ-
վետվությունը Երջխորհրդի դործու-
նեյություն մասին:

Ընկ. Յակովլեվան Մասմանադրու-
թյունն ուսումնասիրելու ժամանակ
ոգտադործել է գեղարվեստական—
գրական և լրագրային նյութեր:
Ստուգումների ժամանակ յերեխա-
ները ցույց տվին, վոր նրանք յուրա-
ցրել են Մասմանադրությունը: Վոչ
մի աշակերտ վատ գնահատական չը-
ստացավ:

318 դպրոցի ուսուցչուհի ընկ.
Վիլչինսկայան խորը մտածում ու
նախապատրաստում եր Մասմանա-
դրության յուրաքանչյուր դասը:
Առաջին դասերից սկսած նա իր ա-
ռաջ ինդիր եր դրել հասնել այն բա-
նին, վորպեսզի յերեխաները լավ
հասկանան և յուրացնեն ընկ. Ստա-
լինի գեկուցումը:

Ուսումնասիրելով ընկեր Ստալինի
գեկուցման II գլուխը—«ԽՍՀՄ-ի
կյանքում տեղի ունեցած փոփոխու-
թյունները» թեման, ուսուցչուհին
հասավ այն բանին, վոր աշակերտ-
ները հասկացան այդ գլխի յուրա-
քանչյուր բառը: Նա չատ աշխատեց
յուրաքանչյուր բառը և միտքը բա-
ցատրելու վրա, վորոնք անձանոթ
եյին VII դատարան հենց նոր փոխա-
դրված աշակերտներին, որինակ,
«ՆեՊ», «տնտեսության սխտեմը»,
«միջնադարյան տեխնիկա», «սֆերա»
«արտադրանք», «նշանաժամ», «սո-
ցիալական խմբեր», «առուկառուրա»,
«չահագործում»: Հողատարությունը
աշխատելով ընկեր Ստալինի գեկուց-
ման բացատրության վրա, պարապ-
մունքների հենց առաջին որերում
ընկ. Վեյչինսկայան նախապատրա-

ստեց յերեխաներին յուրացնելու
Մասմանադրության ամբողջ հեռա-
գա դասընթացը: Ընկ. Վեյչինսկա-
յայի աշխատանքներում առանձնա-
պես հետաքրքիր եր այն գիտելիք-
ների վրա հենվելու ունակությունը,
վորոնք ստանում են յերեխաները,
գիտելով կինոֆիլմերը, կարգայով
գեղարվեստական գրականություն,
լրագրեր, ամսագրեր: Դասերի ժա-
մանակ լայն կերպով ոգտադործված
ե յեղել «Մաքսիմի վերադարձը» կի-
նոնկարը, յերբ բացատրել և ԽՍՀՄ-
ի աշխատավորության դեմոկրատա-
կան իրավունքները: Փիլմի նյութով
ցույց և տրվել իրավագրեկությունը և
կամայականությունը ցարական Ռու-
սաստանում: յերեխաները սովորել
են մտածել և վերլուծել տեսածը:

Սխտեմատիկ աշխատանք և տար-
վել լրագրային նյութի վրա: Ընկ.
Վեյչինսկայի դասերին միշտ ոգտա-
դործվում են գունեղ դիտողական
ձեռնարկներ: Ստուգումների ժամա-
նակ դասաբանում, բացի տղազիր
ձեռնարկներից կար «Մեր յեղապրա-
կան Միութենական Հանրապետու-
թյունները» թեմայի մոնոտաժը, վորը
պատրաստված եր «СССР на стройке»
Ժուռնալի նյութերից: Յերեխաները
պատասխանները տալիս եյին կապա-
կցված մեծ պատմվածքի ձևով, լավ
չարադրելով Մասմանադրության
տեղատը և ընկեր Ստալինի գեկուց-
ման զանազան բաժինները: Աշակերտ
ներն իրենց պատմելու ժամանակ ոգ-
տվում եյին պատմական, գեղարվես-
տական գրականությունից:

Ստուգումների ժամանակ աշակերտ
ները ցույց տվին, վոր նրանք սիրով
են գրադվել Մասմանադրության ու-
սումնասիրությանը: Դպրոցում չկա
և վոչ մի վատ գնահատական Մա-
մանադրությունից: Դերիշխում են
լավ և գերազանց գնահատականնե-
րը: Լավագույն ուսուցիչները մոտ
ստուգումների տվյալները ցույց են
տալիս, վոր գերիշխող գնահատա-
կանները գերազանց և լավ են: Նույն-

իսկ վոչ բավարար չափով պատրաստ
ված ուսուցիչներն մոտ աշակերտնե-
րի գիտելիքներն ավելի լավ եյին,
քան այդ կարելի յեր սպասել: Սա
ամենից առաջ բացատրվում է նրա-
նով, վոր մեր յերկրում Սահմանա-
դրությունն ուսումնասիրելու հետա-
քըքրությունն այնքան խորն է, մեծե-
րի ու յերեխաների սերը դեպի Սահ-
մանադրության ստեղծողն ընկեր
Ստալինն այդքան մեծ է, վոր աշա-
կերտներն առանձնապես վերաբերվե-
ցին Սահմանադրությունից ստուգում
տալուն, — նրանք իրենց համար
ամոթ եյին համարում Սահմանա-
դրությունից ճանաչելուն չընդունել:

Աշակերտության մեծամասնու-
թյունն իր առաջ խնդիր եր դրել
ստուգումների ժամանակ Սահմանա-
դրությունից «գերադանց» ստանալ-
իսկ ու յուրյակն ծնողներէ հետա-
քըքրությունը, վորպեսզի նրանց
յերեխաները լավ իմանան Սահմանա-
դրությունը: 167 դպրոցում VII դա-
սարանի աշակերտներից մեկը առա-
ջին քառորդում միջակ գնահատական
եր ստացել: Հայրը խիստ վշտացած
վորդիւ եր լրացուցիչ կերպով
պարապել տղայի հետ, և յերկրորդ
քառորդում տղան «լավ» գնահատա-
կան ստացավ: Բայց հայրը, բավա-
կանացած չլինելով դրանից, դալիս է
դպրոց իմանալու, թե Սահմանադրու-
թյունը գերադանց իմանալու համար
տղան լրացուցիչ կերպով ինչ պետք
է կարդա և յուրացնի: Յերրորդ քա-
ռորդում աշակերտը միանգամայն
արժանի կերպով ստանում է «գերա-
դանց»:

Համարյա թե միշտ Սահմանադրու-
թյունից «միջակ» կամ «լավ» գնա-
հատական ստացած աշակերտը, ըն-
թացիկ աշխատանքի պրոցեսում շատ
է խնդրում դասատուին ելի հարցնել
նրան, հայտարարելով, վոր նա այժմ
լավ է պատրաստում ամեն մի դասը
և չի կարող հաշտվել այդպիսի գնա-
հատականի հետ: Սահմանադրու-
թյունը լավ իմանալու ցանկությունն

արտահայտվում է նաև նրանով, վոր
յերեխաները աշխատում են գնել կամ
ձեռք բերել Սահմանադրությունից
այն գրքերը, վորոնք տեսնում են
դասատուի մոտ:

Սահմանադրության դասավանդ-
ման լավ դրվածքի արդյունք է հան-
դիսանում աշակերտների քաղաքա-
կան դարգացումը, VII դասարանի
աշակերտների լայն շարժումը դեպի
կոմյերիտմիությունը, դիտակցական
դիսցիպլինայի աճումը, ԽՍՀՄ-ի
քաղաքացու պարտականությունները
հասկանալը գործնականում ցույց
տալու ձգտումը, հետաքրքրությունը
դեպի քաղաքական, գրականություն,
լրագրերի և ամսագրերի ընթերցա-
նությունը:

Սրա հետ միասին պետք է նշել,
վոր շատ դպրոցներում Սահմանա-
դրության դասավանդումն անբա-
վարար եր դրված և այդ պատճառով
էլ այդ առարկայի քաղաքական-դաս-
տիարակչական ազդեցության ուժը
աշակերտների վրա թուլացրած է
յեղել:

Այդ դպրոցներում Սահմանադրու-
թյան դասավանդման արմատական
թերությունը կայանում եր չոր ու
ցամաք շարադրման, VII դասարանի
աշակերտների տարիքային առանձնա-
հատկությունները և նրա դարգաց-
ման ընդհանուր մակարդակն ան-
տեսելու մեջ: Մի շարք դեպքերում
ուսուցիչը սահմանափակվում եր
միայն Սահմանադրության հոդված-
ները պատմելով — առանց բովան-
դակության և հոդվածի նշանակու-
թյան կոնկրետ բացատրության:
Պարապմունքները տարվում եյին ա-
ռանց ցույց տալու սոցիալիստական
չինարարության նվաճումներն, ա-
ռանց ցույց տալու մեր յերկրի անց-
յալը: Ուսուցիչների աշխատանքնե-
րում հանդիպած թերությունների
թվին են պատկանում նաև Սահմա-
նադրության տեկստի մոռանալը,
վորը միշտ պետք է շարադրվող
նյութի հիմքը կազմէ: Ուսուցիչը

տարվում է ընդհանուր դասողու-
թյուններով, մի կողմ թողնելով ի-
րեն՝ Սահմանադրության բացադրու-
թյունը: Ստուգումների ժամանակ
առանձին աշակերտներ պարզորոշ
կերպով հայտաբերեցին դասա-
վանդման թերությունները: 172
դպրոցում հայտաբերվեց, վոր յերե-
խաները չեն յուրացրել սոցիալիս-
տական սեփականության ձևերի թե-
ման, չիմթում եյին անձնական սե-
փականությունը մասնավոր սեփա-
կանության հետ և ընդհանրապես
Սահմանադրության հիմնական շատ
հարցերի մասին պարզ հասկացողու-
թյուն չունեյին: Պատասխանելով
պետական կառուցվածքի մասին, ա-
շակերտները չեյին կարողանում քաղ-
տեղի վրա ճիշտ ցույց տալ Միութե-
նական Հանրապետությունները:
Դասավանդման վոչ բավարար դըր-
վածքի պատճառները ամենից առաջ
պետք է փնտռել դասատուի մեջ:
Դասավանդման վորակը ամենից ա-
ռաջ ուսուցիչն է վորոշում:

Սահմանադրության դասատուների
աշխատանքների անալիզը ցույց է
տալիս, վոր նրանց պատրաստակա-
նությունը մի շարք շատ լուրջ թե-
րություններ ունի: Հաճախ ունենա-
լով վոչ վատ ընդհանուր-քաղաքա-
կան պատրաստականություն, ուսու-
ցիչը (պատմաբաններից, դիմկտոր-
ներից և պրոպագանդիստներից) վոչ
միշտ է պատրաստված լինում պե-
տական կառուցվածքի հարցերում,
իրավական կարգի հարցերում,
վորոնք պարտավոր է լավ հասկանալ
Սահմանադրության յուրաքանչյուր
դաստոյ: Ուսուցիչը թերիկապես
միշտ չէ վոր գիտված է լինում և
միշտ չէ վոր գիտե այն գրականու-
թյունը, վորը մերկացնում է ժողո-
վրդի թշնամիների թշնամական
հակահեղափոխական գործունեյու-
թյունը իրավական ֆրոնտում
Սահմանադրության դասատուների
թերեւորիկ անբավարար պատ-
րաստականությունն արտահայտ

վում է նաև նրանով, վոր ուսուցի-
չը, բերելով նյութեր Ռուսաստանի
անցյալից ցարիզմի որոք, կապիտա-
լիստական յերկրների կյանքից, չեն
կարողանում ճիշտ լուսարանել ըն-
դարկվող հարցերը, ամեն քայլափո-
խում հանդես են բերում գոհակու-
թյուն, մի կույտի մեջ են խառնում
Փաշիստական կարգերով կապիտա-
լիստական յերկրները և կապիտա-
լիստական յերկրները բուրժուական
«դեմոկրատիայի» կարգերով:

Ուսուցչի կողմից պատմությունը
չիմանալու հետեանքով նրա հետեից
աշակերտները հաճախ կոպիտ սխալ-
ներ են անում, վորոնք ուսուցչի
կողմից չեն ուղղվում: Որինակ «Մին
չև Հոկտեմբերյան Սոցիալիստական
Հեղափոխությունը վոչ մի կույ-
տուրա չի յեղել»:

Խոսելով պրոլետարիատի կյանքի
մասին արտասահմանում, շատ ու-
սուցիչներ կոնկրետ փաստեր չեն տա
լիս, կենդանի պատկերացում չեն
տալիս այն մասին, թե ինչու են և
կայանում կապիտալիզմի սարսափը
աշխատավորության համար, իսկ մի
շարք դեպքերում սահմանափակվում
են ընդհանուր ֆրազներով — նրանց
կյանքը ծանր է, վատ է, մինչդեռ
լրագրերն ամեն ուր շատ վառ նյու-
թեր են տալիս, վորոնք նկարագրում
են աշխատավորության կյանքը կա-
պիտալիստական յերկրներում:

Սրա հետ միասին շատ ուսուցիչներ
պրոպագանդիստներից և իրավաբա-
նական ԲՈՒՀ-երից — պատրաստված
չեն մեթոդիկայից: Դպրոցական աու-
դիտորիայի հետ աշխատելու ունա-
կության բացակայությունը նրանց
աշխատանքը դարձնում է քիչ եֆեկ-
տիվ: Այս բոլորը ասում է, վոր ան-
հրաժեշտ է յուրը աշխատանք տանել
ուսուցիչների կողմից տիրապետելու
Սահմանադրության դասընթացի
բովանդակությանը և մեթոդիկային:
Իր արտավայրը և քաղաքականա-

Սեդեհ 88-11

պես պատասխանատու աշխատանքը հաջող տանելու համար Սահմանադրության դասատուն պետք է բաժարաիր ՀամԿ(Բ)Կ ԿԿ որդան «Պրավդայի» կողմից առաջադրված հետևյալ պահանջներին. «Առնվազը, յերկու պայման պետք է առաջադրել այն մարդկանց, վորոնց կհանձնվի Ստալինյան Սահմանադրության դասավանդումը... Նախ, վորպեսզի նրանք լինեն մանկավարժներ քաղաքական լայն շրջապեղծությանը և մեծ հմտությամբ: Չի կարելի այն պիսի չափազանց կարևոր առարկան ինչպիսին է Սահմանադրությունը տանել... Հիմանալով Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ուսմունքը: Յեվ, յերկրորդ, հարկավոր է առանձնացնել այնպիսի ընկերների, վորոնք չչորացնեն այդ դրավիչ առարկան, այլ այն տան սովորող յերեխաներին և յերիտասարդությանը վառ ձեռով, խորհրդային ամենահարուստ իրականության որինակներով» («Պրավդայի» առաջնորդող 1937 թ. փետրվարի 5):

Մի քանի դիրեկտորներ և դասատուներ ղեկուս չեն հասկացել իր ամբողջ խորությունը դպրոցներում Սահմանադրության, վորպես պետական առարկայի, դասավանդման նշանակությունը, մի առարկայի, վորն իր նշանակությամբ չունի իրեն հավասար միջնակարգ դպրոցում:

Անցած տարվա աշխատանքի փորձը, լավագույն ուսուցիչների նրվածումները, ղեպի Ստալինյան Սահմանադրությունն ուսումնասիրելու սովորողների ունեցած հսկայական

հետաքրքրությունն— այս բոլորը 1938—1939 ուսումն, տարում դեպրոցներում Սահմանադրության դասավանդման արմատական բարելավման համար պայման են հանդիսանում:

Տվյալ ուսումնական տարում մենք կսկսենք Սահմանադրության դասավանդումը, հարստացած Ստալինյան Սահմանադրության ընտրական որեւիքիկենսադրծման փորձով: Դպրոցականները ամբողջ աշխատավորության հետ միասին ապրում էին համաժողովրդական տոները հուլիսի 1-երը: Միութենական և ավտոնոմ հանրապետությունների Գերագույն խորհուրդները— ընտրությունները: 1937 թ. դեկտեմբերի 12-ը և 1938 թ. հունիսի 24—26-ը փայլուն ելերով կրմունեն լենինյան—ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակների պատմության մեջ:

1938—39 ուս. տարին զուգադիպում է պետական իշխանության տեղական մարմինների ընտրությունները նախապատրաստելուն և անցկացնելուն, ժողովրդական դատարանների ընտրություններին, ՀամԿԽՍՀ 20-ամյակի տոնակատարությանը: Սա աշխատավորության ամբողջ մասսայի քաղաքական ամման ևս մեկ աստիճան է, սա խորհրդային հայրենասիրության և սոցիալիստական շինարարության հաջողությունների աճման տրաի յե:

Այս բոլորը անգնահատելի նյութ է տալիս խորհրդային դպրոցականի դատարարական համար:

1938—1939 ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ ՑԱՐԸ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Անցած տարում հայտնաբերված ուսուցիչների աշխատանքների թիվը ընդհանրապես պարտավորեցնում են Սահմանադրության յուրաքանչյուր դասատույի համառորեն, հաստատորեն տիրապետել մարքսիզմին—լենինիզմին, յուրաքանչյուր որ ուսումնասիրել

միջնակարգ միջնակարգ դպրոցություն, ուսումնասիրել սոցիալիզմի համար մղվող պայքարի հաջողությունները ԽՍՀՄ-ում: Անհրաժեշտ է առաջին հերթին ուսումնասիրել Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի յերկերը—

Միայն Լենինի «Պատկերներ և հեղափոխություն» աշխատության, ՀամԿ(Բ)Կ ծրագրի խորն ուսումնասիրության ղեպում, «Լենինիզմի հարցերը», ընկեր Ստալինի ղեկուցման—Սահմանադրության նախագիմասին,— նախընտրական ժողովում 1937 թ. դեկտեմբերի 11-ին արտասանած նրա ճառի, ՀամԿ(Բ)Կ ԿԿ փետրվար— մարտյան պլենումում արած «կուսակցական աշխատանքների մի քանի թերությունների և տրոցկիստական, ու այլ յերկերեսանիներին լիկվիդացիայի յենթարկելու մասին» ղեկուցման խորն ուսումնասիրության ղեպում, ՀամԿ(Բ)Կ պատմության դասադրքի (համառոտ դասընթաց ՀամԿ(Բ)Կ ԿԿ հանձնաժողովի խմբագրությամբ), ԽՍՀՄ-ի Սահմանադրության և Միութենական Հանրապետությունների Սահմանադրությունների (ԽՍՀՄ-ի Սահմանադրության և Միութենական Հանրապետությունների Սահմանադրությունների ժողովածու — Մ., 1937 թ. հրատարակություն ՀամԿԿ կից «Вся власть Советам») խորն ուսումնասիրության ղեպում հնարավոր է արժանավոր կերպով ղենլ Ստալինյան Սահմանադրության դասավանդումը:

Բացի դրանից անհրաժեշտ է սիստեմատիկորեն ոգավել «Պրավդա» և «Կոմսոմոլսկայա Պրավդա» լրագրերից: Լրագրերը շատ հարուստ նյութ են տալիս դպրոցականների հետ աշխատելու համար:

Ուսուցչի համար արժեքավոր նյութ են տալիս «Սպուտնիկ ագիտատոր», «Վ պոմոլչ պարտուշեն» լրագիրը և մի շարք բրոշյուրներ, վորոնք յույս են ընծայված Գերագույն խորհուրդների ընտրության կապակցությամբ: «Творчество народов СССР» գիրքը, Սահմանա-

դրության ուսուցչի համար սեղանի գիրք պետք է լինի,—նա Սահմանադրության շատ թեմաների համար վառ իլյուստրացիաներ է տալիս:

Սահմանադրության ուսուցիչը, լավագույն ուսուցիչների որինակներով, պետք է տիրապետի դասավանդման մեթոդին:

Աշակերտներին նոր գիտելիքներ հաղորդելու մեջ ուսուցչի պատմվածքը առաջնատար դեր է խաղում: Ուսուցիչը պետք է մեծ ուշադրությամբ աշխատի պատմվածքը նախապատրաստելու վրա: Դասի համար անհրաժեշտ դրականությունը կարդալուց հետո, ուսուցիչը պետք է ձևակերպի դասի նպատակը և անցնի պլան-կոնսպեկտ կազմելուն, վորի մեջ պետք է ցույց տրվի դասի նյութի շարադրման հետեւողականությունը, բերել քաղվածքներ կարդացած պրականությունից այն փաստական նյութը, վորն ուսուցիչը նշել է աշակերտներին հարգելու համար: Նյութն ընտրելիս ուսուցիչը պետք է յերնի Սահմանադրության համար պատասխան հողվածի յովանդակությունից և Սահմանադրության նախագիմասին ղեկուցումից, ընտրելով այդ հիմնական փաստաթղթերի համար անհրաժեշտ իլյուստրատիվ մատերիալ:

Պատմվածքը պետք է քաղաքականացնի, հուզական և աշակերտների հասկացողության համար մատչելի լինի: Վեչ մի ղեպում չպետք է ձգտել վորքան կարելի յե շատ նյութ հավաքել դասի համար: Առատ նյութից հարկավոր է ընտրել ամենապարզ փաստերի և ամենանշանավոր յեզրակացությունների մի-նիմումը: Ուսուցիչը պետք է հիշի, վոր նա պետք է կարողանա հասցնել վեչ միայն պատմել, այլև հարցնել աշակերտներին, պատասխանել նրանց մեջ ծագած հարցերին:

21

սուղջին հուլիսի հարցերից մեկը: Լավագույն ուսուցիչները դասա-
վանդման պրոցեսում և ստուգում
ներ ժամանակ ջանում ելին, վեր-
աբեզի աշակերտները կարողանան
շարադրել Մասմանադրության հոդ-
վածները, բացառել յուրաքանչյուր
հոդված, բերել հոդվածը նկարագրա-
րող առանձին կոնկրետ որինակներ:

Աշակերտները պետք է իմանան և
կարողանան որինակներով ցույց
տալ, վեր աշխատավորների կյանքն
կապիտալիստական յերկրներում
միտնգամայն հակառակ պատկեր է
ներկայացնում նրան, ինչ վեր նը-
վաճված և ձեռք երբեմն սոցիալիս-
տական հեղափոխության հետևան-
քով մեր յերկրում, աշակերտները
պետք է հասկանան, կարողանան
կապակցված պատմել ընկեր Ստալի-
նի զեկուցումը խորհուրդների Արտա-
կարգ VIII համագումարում, Սահ-
մանադրության հոդվածների բացատ-
րության ժամանակ քերել այդ զե-
կուցման առանձին բաժինները, կա-
րողանալ բացատրել Մասմանադրու-
թյան մեջ հանդիպած տերմինները,
ցույց տալ քարտեզի վրա խՍՀՄ-ի
պետական վարչական-տեղիտորիալ
բաժանումը (միութենական, ավտո-
նոմ հանրապետութիւնները, ավտո-
նոմ մարզերը և ազգային ոկրուդ-

ները), կարողանալ բացատրել պե-
տական իշխանութիւնն մարմինների
սխեման: Դասագրքի բացակայու-
թյան դեպքում անհրաժեշտ է հենց
ուսումնական տարվա սկզբից սահ-
մանել ձեռնարկները այն միտնգամը,
վորոնք պետք է ուսումնասիրել և
հաստատուն կերպով յուրացնել ուժե-
մի աշակերտ ուսումնասիրան տարվա
ընթացքում:

Յեղնելով անցած ուսումն. տարվա
փորձից, կարելի չէ աշակերտներին
հետևյալ գրքերը հանձնարարել.

1. ԽՍՀՄ-ի և ՌԽՖՍՀ- Մասմա-
նադրութիւնները:
 2. Ընկեր Ստալինի զեկուցումը
Մասմանադրութիւնն նախագծի մասին
ԽՍՀՄ-ի խորհուրդների Արտակարգ
VIII համագումարում:
 3. Հայկական ԽՍՀ Մասմանա-
դրութիւնը
 4. «Մեր հայրենիք», «ԽՍՀՄ և
կապիտալիզմի յերկրները»:
- Անցած տարվա հանրագումարները
պարտադրում են Մասմանադրութիւն
դասատուններին աշակերտներին ներ-
կայացվելիք պահանջները բարձրաց-
նելու հիման վրա 1938-39 ուսումն.
տարում հասնել աշակերտների կող-
մից Մասմանադրութիւնն «գերազանց»
և «լավ» յուրացման:

ԱՍԽԱՏԱՆԲԸ ՓԱՏԱՐԱԴԹԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՐԻ ՓԱՄԱՆԱԿ

Բացի ԽՍՀՄ-ի Մասմանադրութիւն
վրա կատարվող ամենօրյա աշխա-
տանքներից, անհրաժեշտ է ծանո-
թացնել աշակերտներին ընթացիկ ու-
րենագրութիւնն փաստաթղթերին:
ԽՍՀՄ-ի և ՌԽՖՍՀ Գերագույն Խոր-
հուրդների նստաշրջանների վորո-
շումները պետք է աշակերտներին ու-
շագիր բացատրութիւնն առարկա լի-
նեն: Բացի գրանից հարկավոր է ծա-
նոթացնել յերեխաներին Գերագույն
Խորհրդի նախագահութիւնն սեկապ-

ներին և ԽՍՀՄ-ի ԺԿԽ կարեորա-
դույն վորոշումներին, պետական զոր
ծիչների ձառերին, — այս բոլորը
կոնկրետ պատկերացում կտան յե-
րեխաներին իշխանութիւնն և կառա-
վարման բարձրագույն մարմինների
վործունեութիւնն մասին: Ուստի ան-
հրաժեշտ է Մասմանադրութիւնն դա-
սերի ժամանակ լրագրի ամենօրյա
ոգտագործում: Մասմանադրութիւնն
դասատույի խնդիրներից մեկը հան-

դիտանում է — սովորեցնել յերեխան-
ներին կարգալ և սիրել լրագիրը,

նրանց մեջ լրագիր կարգալու պա-
հանջ դաստիարակել:

ԳՐԱՆՅՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Ինչպիսի բովանդակութիւնն պետք
է ունենա գրանցումը:

Դասի թեմայի անունը: Դասի հա-
մառու պլանը: Աշակերտներին հա-
ղորդվելիք փաստական նյութի գրան-
ցում, որինակ, տարեթիվը, այն յեր-
կրների անունները, վորտեղ կանայք
զրկված են իրավունքներից, թվական
սովորներ, վորոնք ցույց են տալիս
կանանց ու տղամարդկանց աշխատան
քի վարձատրման տարբերութիւնը
կապիտալիստական յերկրներում, տրվ
յալներ ընտրութիւններին ներկայա-
նալու մասին բուրժուական յերկրնե-
րում և ԽՍՀՄ-ում, այնպիսի տեղե-
կութիւններ, վորոնք բնութագրում
են պրոլետարիատի շահագործումը
կապիտալիստական յերկրներում:
Տեարում պետք է գրված լինի ան-
հասկանալի բառերի բացատրութիւ-
նը (մոնոպոլյա, ռառիֆիկացիա,
ամիստյա, կոմպետենցիա և այլն):

Տեարերում պետք է լինեն իշխա-
նութիւնն և պետական կառավարման
բարձրագույն մարմինների սխեմա-
ները, պետք է գրանցել եքսկուզիա-
յի ժամանակ, նույնպես և շրջաբ-
հրդի և նրա բաժինների աշխատանք-
ները ծանոթանալու հետևանքով ստա-
յած նյութները:

Ցանկալի չէ, վոր տետրի հետ միա
սին, յուրաքանչյուր աշակերտ ու-
սումնական տարվա սկզբից ունենա
Մասմանադրութիւնն ալբոմ: Ալբոմի

մեջ կարելի չէ պահել Մասմանադ-
րութիւնն հետ կապ ունեցող թեմա-
ների լրագրային կտրվածքներ, ուր-
ինակ, տեղեկութիւններ կամ հոդ-
վածներ Գերագույն Խորհրդի ան-
դամների վործունեութիւնն մասին,
շրջանային խորհրդի, գյուղխորհրդի
աշխատանքների մասին նյութեր սո-
ցիալիստական տնտեսութիւնն և կուլ-
տուրայի մասին, Գերագույն Խոր-
հրդի հրատարակած որենքները,
նախագահութիւնն ուկագները, ԺԿԽ-
ի վորոշումները: Բացի գրանից,
ցանկալի չէ ալբոմում պահել դիտո-
դական նյութեր (նկարներ), պատմ-
վածքներ, վորտանվորները, նույն-
պես և «Աշխատավորութիւնն կյանքն
արտասահմանում» բաժինը:

Նյութերի ընտրութիւնն հաջողու-
թիւնն ապահովելու համար անհրա-
ժեշտ է հենց ուսումնական տարվա
սկզբին պատմել յերեխաներին, թե
ինչպիսի բաժիններ կարող են լինել
ալբոմում: Ցուրաքանչյուր ալբոմի
վրա կարող են աշխատել 2-3 աշա-
կերտ, վորնք իրենց տրամադրու-
թիւնն տակ դանադան լրագրեր ու-
նեն:

Այսպիսով, դասարանում կարելի
չէ ստեղծել 15-20 ալբոմ, վորոնք
չատ արժեքավոր նյութեր կտան և
կհարստացնեն աշակերտութիւնն գի-
տելիքներն ու շատ ոգտակար կլի-
նեն կրկնութիւնների ժամանակ:

ԴԻՏՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՄԻՆԻՍՈՒՄԸ

1. ԽՍՀՄ-ի քարտեզ:
2. ԽՍՀՄ-ի, ՌԽՖՍՀ Մասմանա-
դրութիւնները պատի վրա կախելու
տեղան:
3. ԽՍՀՄ-ի, ՌԽՖՍՀ և Հայկական
ԽՍՀ իշխանութիւնն և կառավարման

- մարմինների սխեմաներ:
4. Պալատ — Գերագույն Խոր-
հուրդը (սոցիալական, կուսակցա-
կան կազմը, կանանց մասնակցու-
թիւնը, պատգամավորների տարե-
քը, ընտրութիւններին նորմաները):

5. ԽՍՀՄ-ի, ՌԽՖՍՀ, Հայկական ԽՍՀ պետական կառուցվածքի սխեման:

6. Դիպլոմներ՝ տնտեսական և կուլտուրական շինարարությունը ԽՍՀՄ-ում և Միութենական Հանրապետություններում (ըստ «Պորտուգալիյն իշխանություն» 20 տարին» ժողովածուի, տես 18, 51, 81 և ուրիշները):

Այնտեղ, վերտեղ դպրոցները կարողացել են ձեռք բերել կարելի չէ լայն կերպով ոգտագործել հետևյալ ալրոմները: «Քաղաքագիտության ալրոմ», 1 և 2 հրատարակութ., «ԽՍՀՄ-ի Գերագույն Պորտուգալիյն», «Կանանց իրավահավասարությունը ԽՍՀՄ-ում», «Ստալինյան Սահմա-

նադրությունը», «Սոցիալիզմի Սահմանադրությունը»: Իրրե դիտողական նյութ լայն կերպով կարելի չէ ոգտագործել «СССР на стройке»:

Մոսկվան ուսուցչին հնարավորություն է տալիս լայն կերպով ոգտագործել եքսկուրսիոն մեթոդը: Հարկավոր և եքսկուրսիաներ կազմակերպել առաջին հերթին Լենինի թանգարանը, ԽՍՀՄ-ի ժողովուրդների թանգարանը, հեղափոխության թանգարանը, Արեւելյան կուլտուրաների թանգարանը: Եքսկուրսիաները հարստացնում են յերեխաների գիտելիքները և առանձնապես մեծ նշանակություն ունեն անցածի ամրացման և կրկնության համար:

ԿԻՆՈՖԻԼՄԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Կինոն պետք է հանգիստնա իրրե արժեքավոր միջոց Սահմանադրության դասավանդման մեջ: Մեր դրպրոցականները սխտեմատիկորեն հաճախում է կինո և մեծ ուշադրությամբ դիտում է այն Ֆիլմերը, վերոնք նկարագրում են հերոսությունները քաղաքացիական պատերազմում, սոցիալիստական շինարարության մեջ: Սահմանադրության դաստուռն պետք է հետեի նոր Ֆիլմերին և ոգտագործի Ֆիլմերի վառ պատկերները լավագույն կերպով բացատրելու համար այս կամ այն թեման:

Ամենից առաջ աշակերտները պետք է դիտեն Սահմանադրության հետանմիջական կապ ունեցող հետևյալ Ֆիլմերը:

1. Ընկեր Ստալինի գեկուցումը Սահմանադրության նախադի մասին ԽՍՀՄ-ի Պորտուգալիյնի Արտակարգ VIII համագումարում:

2. Ընկեր Ստալինի ճառը Ստալինյան ոկրուգի բնորոշների առաջ 1937 թ. դեկտեմբերի 11-ին:

3. Ընկ. Բուլգանինի գեկուցումը՝ «Կանոնադրություն ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների մասին»:

«Առաջին խորհրդային Սահմանադրությունը և ԽՍՀՄ-ի կազմավորումը» թեմայի ուսումնասիրության կապակցությամբ խորհուրդների իշխանության համար մղած պաշարի մասին արժեքավոր նյութ է տալիս «Լենինը Հոկտեմբերին» Ֆիլմը: «Տասնիններորդ տարին», «Բարեկամներ թախառախմբից», «Նալտիկցիներ», «Բարեկամներ» նկարները կողնեն աշակերտներին պարզել իրենց համար, թե ինչ գնով բանվոր դասակարգը, դաշինք կնքելով դյուղացիության հետ, Լենինի - Ստալինի կուսակցության գեկավարության մաշադանց մեր յերկիրը թշնամիների բազմաթիվ վոհմակների հարձակումներից:

Վոչ ուռս ազգությունների դրությունը ցարիզմի որոք և աշխատավորության հերոսական պաշարը ցարիզմի և բուրժուական նացիոնա-

լիստների դեմ աշակերտները կտեսնեն «Ջանգեդուր», «Բազմեցիները», «Արսեն», «Դարիկո» նկարներում:

Պորտուգալիյն մարդկանց հերոսությունը և հայրենիքի սերը վառ նրկարագրում են «Յեթե վաղը պատերազմ լինի», «Պապանինցիները»: «Մեծ քաղաքացին», «Կոմսոմոլսկի» նկարները:

«Գորկու մանկությունը», «Մաքսիմի պատանեկությունը և վերագարձը», «Սպիտակին և տալիս առաջատար մենավոր» նրկարներում վառ արտացոլված են աշխատավորների կենցաղը ցա-

յական Ռուսաստանում և հեղափոխական պաշարը միապետության դեմ:

Ֆիլմերի այս բազականին վոչ լրիվ ցուցակը ցույց է տալիս, թե ինչպես լայն կերպով կարելի չէ ոգտագործել կինոնկարները Սահմանադրության ուսումնասիրության ժամանակ:

Սահմանադրության դասերի ժամանակ հարկավոր է լայն կերպով ոգտագործել պատեֆոնն ընկեր Ստալինի, Մոլոտովի, Կալինինի, գեկուցումները յսելու համար:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Անցած ուսումնական տարում Սահմանադրության դասավանդման կապակցությամբ վոչ մի մեթոդական աշխատանք դպրոցներում չէր տարվել, մինչդեռ Սահմանադրության դասատուներն մեթոդական ցույցմոնքների առանձնապես սուր կարիք էլին զգում:

Նոր ուսումնական տարում անհրաժեշտ է կարգավորել մեթոդական աշխատանքը դպրոցում: Իրրե կանոն, դպրոցում Սահմանադրության միայն մեկ դասատու չէ լինում: Դպրոցի ներսում հնարավորություն չի լինում մեկնումեկի հետ փոխանակել աշխատանքի փորձով: Ուստի դիրեկտորն ու ուսումնական մասի վարիչը, ծանոթանալով և քննարկելով ուսումնական պլանը և ուսուցչի կողմից նախատեսած աշխատանքի մեթոդները, պետք է պարբերաբար այցելեն նրա դասերը, դասի բովանդակության և մեթոդիկայի ուշադիր անալիզ կատարեն և այնուհետև ստուգեն, թե վորքան հաջող կերպով են իրականացվում այդ ցուցմունքներն ուսուցչի կողմից:

Սահմանադրության դասավանդման կապակցությամբ յուրաքանչ-

յուր դպրոց պետք է հրավիրեն Սահմանադրության դրականության, աշխարհադրության դասատուների ցիկլային մեթոդական խորհրդակցություններ: Առաջին խորհրդակցության ժամանակ անհրաժեշտ է ծանոթանալ այդ առարկաներից յուրաքանչյուրի ծրագրին և հաշվի առնել, թե յուրաքանչյուր ուսուցիչ ինչպես կկարողանա ոգտագործել այն, ինչ վոր աշակերտները ստանում են մյուս առարկաներից: Որինակ, դրականությունից աշակերտներն անցնում են հետևյալ յերկերը:

1. Салтыков-Щедрин. — «Попехонская старина», «Премудрый пескарь».
2. Л. С. Силуанов — «Հաջի Մուրադ», «Պարահանդեսից հետո»:

3. Чехов — «Человек в футляре», «Злоумышленники».

4. М. Գորկի — «Մրրկահավի յերդր», «Բազեյի յերդր», «Մայրը»:

5. Մայկովսկի — «Լենին» (հատվածներ պոեմից):

6. Ֆուրմանով — «Չապակ»

Ցույց տված յերկերի թեմատիկան և գրական պատկերները կարող են ոգտագործվել կապիտալիզմի որոք

բուրժուական կարգերի ու աշխատավորների կյանքի առանձնահատկությունները պարզաբանելու ժամանակ: Մյուս յերկերը նկարագրում են աշխատավորության հերոսական պայքարը ցարիզմի սրտը, հերոսական պայքարը քաղաքացիական պատերազմների շրջանում:

Բացի դրանից, գրականության դաստիարակչական հետ միասին Սահմանադրության դասավանդման հարցերի քննարկումը կոգնի ուսուցչին հենվել աշխատանքի ընթացքում գրական այն նյութերի վրա, վորոնք անցած են V — VI դասարաններում և վորոնք կարող են նույն ծառայել Սահմանադրություն համապատասխան հոգվածներն անցնելու համար:

Կապը VII դասարանի աշխարհագրության դասատույի հետ, վորտեղ անցնում են «ԽՍՀՄ-ի Ֆիզիկական աշխարհագրության ընդհանուր դասընթացը» կոգնի ոգտագործել յերեխաների գիտելիքները աշխարհագրությունից Միութենական Հանրապետություններին նվիրած պարագմունքների ժամանակ:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Հանդիսանալով կարևորագույն քաղաքական առարկայի դասատու, ուսուցչի վրա միայն իր դասարանի հետ տարվելիք մասսայական քաղաքական աշխատանքի կազմակերպման նախաձեռնողը պետք է լինի, այլև ամբողջ դպրոցում:

Ուսուցչի հաջողությունը մասնաշխատանքի քաղաքական աշխատանքի բընագավառում ապահովված իլինի միայն այն դեպքում, յեթն նա իր աշխատանքներում կհենվի դպրոցի կոմյերիտական և պիոներական կազմակերպությունների վրա:

Ուսուցչի պետք է մասնակցություն ունենա դպրոցական պիոներ-

Ուսուցչին ցիկլային խորհրդակցություններ անհրաժեշտ է ունենալ նաև մասսայական քաղաքական կամպանիաների, տոների և այլն պլանը քննելու ժամանակ: Պլանի մշակումը և խմբակային աշխատանքների անցկացումը նույնպես պետք է վերևում հիշված առարկաների ուսուցչին կոլեկտիվի քննության առարկա լինեն:

Չափազանց կարևոր է դպրոցում խորհրդակցությունների ժամանակ քննել հետևյալ հարցերը.

1. «Փաստաթղթերի վրա աշխատելու մեթոդիկան Սահմանադրության դասերի ժամանակ».

2. «Գեղարվեստական գրականության ոգտագործումը Սահմանադրության X գլխի ուսումնասիրության կապակցությամբ (Քաղաքացիների հիմնական իրավունքները և պարտականությունները)».

3. «Ինչպես ոգտագործել դասերին եկակուրսիայի ժամանակ ստացած նյութը».

4. «Աշխատանքը դիտողական նյութերով Սահմանադրության դասերի ժամանակ»:

րական ջոկատների աշխատանքների պլանի մշակմանը: Պիոներական հավաքություններում, տոնական խարուկների ժամանակ VII դասարանի աշակերտները — պիոներները — կարող են յեկույթներ ունենալ, տալով քաղաքական ինֆորմացիաներ, դեկուցումներ, վորոնք նախապատրաստված են յեղել Սահմանադրություն ուսումնասիրության կապակցությամբ:

Ջոկատի և բոլոր դպրոցականների ուժերով կարելի յե Սահմանադրության ցուցահանդես կազմակերպել, ջոկատի և կոմյերիտական կազմակերպության հետ միասին եկակու-

սիաներ անցկացնել, Համաժողովըրդական տոնի նախապատրաստություն տեսնել: Ամեն մի ուսուցչի ուսումնական տարվա սկզբից իր առաջ պետք է ինդիք դնի Համաժողովրդական տոնին — դեկտեմբերի 5-ին նվիրված յերեկույթ նախապատրաստել դպրոցում: Այս տոնը նախապատրաստելն ու անցկացնելը դաստիարակչական մեծ աղղեցություն պետք է ունենա բոլոր դպրոցականների վրա:

Այս ուսումնական տարում հարկավոր է լայն կերպով ընդարձակել արտադասարանական աշխատանքները Սահմանադրության ուսումնասիրության կապակցությամբ: Արտադասարանական աշխատանքների ձևերը, խմբակներ, եքսկուրսիաներ, յերեկույթների նախապատրաստում: Այս տարվա վորձը ցույց տվեց, վոր աշակերտները մեծ հետաքրքրությամբ են նախապատրաստվում առանձին թեմաներով զեկուցումների: Տալիս ենք խմբակային աշխատանքների մոտավոր թեմատիկան:

«11 յեղալրական Միութենական Հանրապետությունները»: Այս թեման այնքան ընդարձակ է, վոր նրա ուսումնասիրությունը կարող է յերկարել մինչև ուսումնական տարվա վերջը: Աշխատանքների վերջում կարելի յե ԽՍՀՄ-ի ժողովուրդների բարեկամությանը նվիրված մի յերկո կազմակերպել: Այս յերեկոն կարելի յե լավ նախապատրաստել միայն Սահմանադրության, գրականության, նկարչության և յերղեցություն դասատուների կոլեկտիվ աշխատանքով: Ներկա ուսումնական տարում մեծ հաջողություն ունեցավ


դպրոցի աշակերտների կողմից պատրաստված 11 Միութենական Հանրապետություններին նվիրված մոնտաժը:

«Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է» թեման նույնպես կարող է խմբակի մի շարք պարագմունքների առարկա լինել: Այս թեմայում կարելի յե ցույց տալ կարմիր Բանակի հերոսական պայքարը քաղաքացիական պատերազմների տարիներում, սահմանապահների հերոսությունը, խորհրդային ժողովրդի հայրենասիրությունը:

Թեմատիկան լնտրելիս հարկավոր է, ամենից առաջ, յեկնել կոմունիստական դաստիարակության խնդիրներից և յերենց՝ յերեխաների հետաքրքրությունից դեպի այս կամ այն թեման:

Դասերը նախապատրաստելու սիտեմատիկ աշխատանքը, արտադպրոցական աշխատանքների ձևերի ու մեթոդների բաղմագանությունը-այս բոլորը կապահովեն Սահմանադրության դասատույի վրա դրած պատվար պարտականության կտտությունը:

Յուրաքանչյուր ուսուցչի խնդիրն է Սահմանադրության դասերը դարձնել կոմունիստական դաստիարակության հզոր միջոց, անեցնել սոցիալիստական հայրենիքի հաղարավոր հայրենասերներ, վորոնք անասհման նվիրված լինեն Լենինի — Ստալինի կուսակցությանը, լինեն անհաշտ դեպի ժողովրդի թշնամիները, անվախ և արի մարտիկներ կոմունիզմի համար:



Թարգ.՝ ԲՈՇՆԱՂՅԱՆ
 Խմբագիր՝ ՄԱՆՈՅԱՆ
 Արբանյակ՝ ԳԱԼՍՏՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մոսկվայի դպրոցներում ԽՍՀՄ-ի Սահմանադրության	62
դասավանդման փորձից	3
I Սահմանադրության ուսումնասիրության նշանակությունը	
սովորողների կոմունիստական դաստիարակման գործում .	3
II ԽՍՀՄ-ի Սահմանադրության դասավանդման փորձը	
1937-38 ուսումնական տարում	5
1938-39 ուսումնական տարվա խնդիրները	18

Գլավլիտի լիազոր Բ. 1675

Պատվեր № 73

Տիրաժ 1500

Հայկական ԽՍՀ ժողովուրդի հրատարակչություն Վերս
 Տպարան, Յեքիմով



ՀՀ Ազգային գրադարան

NL0936682

26 MAR 1939

14

476 50 4

11

28474